# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2021 թվականի N 991 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱ-ԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) որոշման N 4 հավելվածի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «III. Վարդենիսի տարածաշրջան» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետով.

«7. Միացման ձևով վերակազմակերպել «Վարդենիսի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համար՝ 58.140.00142)՝ այն միացնելով «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությանը (պետական գրանցման համար՝ 58.140.00141): Վերակազմակերպումից հետո

«Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանել «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն:».

2) որոշման N 6 հավելվածի Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «IV. Բերդի տարածաշրջան» բաժնի՝

ա. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հիվանդանոցի մահճակալային ընդհանուր ֆոնդը կազմում է 30 մահճակալ, որը ներառում է մանկաբարձագինեկոլոգիական, թերապևտիկ, մանկական, քիթ-կոկորդ-ականջաբանական, վիրաբուժական, ինֆեկցիոն, ինտենսիվ թերապիայի բաժանմունքների մահճակալները:

| «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն | Մահճակալների թիվը |
|---|---|
| Մանկաբարձական | 5 |
| Գինեկոլոգիական | |
| Հղիության պաթոլոգիայի | |
| Թերապևտիկ | 9 |
| Մանկական | |
| Քիթ-կոկորդ-ականջաբանական | 8 |
| Վիրաբուժական | |
| Ինֆեկցիոն | 3 |
| Ինտենսիվ թերապիայի | 5 |
| Ընդամենը | 30 |

»,

բ. 9-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին:»,

գ. ուժը կորցրած ճանաչել 9-րդ կետի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 7 ամսվա ընթացքում ավարտել սույն որոշմամբ նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման ծրագրից բխող՝ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 64-րդ և 65-րդ հոդվածներով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 20-րդ և 24-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 8 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել հաշվետվություններ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված աշխատանքների իրականացման մասին:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված «Բերդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունում և կառուցվածքում սույն որոշումից բխող փոփոխությունների կատարումը և դրանց պետական գրանցումը՝ ընկերության միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Երևան

17.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ